

Կոտորակների համեմատումը

- Նույն հայտարարով երկու կոտորակներից ավելի մեծ է այն կոտորակը, որի համարիչն ավելի մեծ է:

Օրինակ՝ $\frac{2}{4} > \frac{1}{4}$:

- Նույն համարիչով երկու կոտորակներից ավելի մեծ է այն կոտորակը, որի հայտարարը ավելի փոքր է:

Օրինակ՝ $\frac{1}{2} > \frac{1}{4}$:

- Եթե կոտորակի համարիչն ու հայտարարը իրար հավասար են, ապա կոտորակը հավասար է 1-ի:

Օրինակ՝ $\frac{4}{4} = 1$

- Եթե կոտորակի համարիչը մեծ է հայտարարից, ապա կոտորակը մեծ է 1-ից:

Օրինակ՝ $\frac{6}{4} > 1$, քանի որ $6 > 4$:

- Եթե կոտորակի համարիչը փոքր է հայտարարից, ապա կոտորակը փոքր է 1-ից:

$\frac{4}{6} < 1$, քանի որ $4 < 6$:

Մի կոտորակը մեծ է մյուսից, եթե առաջին կոտորակի համարիչի և երկրորդ կոտորակի հայտարարի արտադրյալը մեծ է առաջին կոտորակի հայտարարի և երկրորդ կոտորակի համարիչի արտադրյալից:

Օրինակ՝

$\frac{4}{6} > \frac{3}{4}$

$$4 \cdot 4 \text{ և } 6 \cdot 3$$

$$16 < 18, \text{ ուստի}$$

$$\frac{4}{6} < \frac{3}{4} :$$

Առաջադրանքներ

1. Համեմատեք կոտորակները

- $\frac{5}{9}$ և $\frac{5}{9}$
- $\frac{101}{4}$ և $\frac{101}{8}$
- $\frac{61}{4}$ և $\frac{61}{24}$
- $\frac{11}{100}$ և $\frac{11}{44}$
- $\frac{108}{10}$ և $\frac{108}{45}$
- $\frac{121}{160}$ և $\frac{121}{160}$
- $\frac{11}{100}$ և $\frac{11}{440}$

2. Համեմատեք կոտորակները

- $\frac{8}{9}$ և $\frac{8}{9}$
- $\frac{101}{4}$ և $\frac{109}{4}$
- $\frac{61}{24}$ և $\frac{1}{24}$
- $\frac{121}{100}$ և $\frac{11}{100}$
- $\frac{18}{10}$ և $\frac{8}{10}$
- $\frac{41}{160}$ և $\frac{121}{160}$
- $\frac{11}{40}$ և $\frac{119}{440}$

3. Համեմատեք կոտորակները

$$\frac{6}{4} \text{ և } \frac{5}{8}$$

$$\frac{11}{8} \text{ և } \frac{6}{18}$$

$$\frac{26}{4} \text{ և } \frac{4}{26}$$

$$\frac{16}{4} \text{ և } \frac{5}{6}$$

4. Համեմատեք կոտորակները

• $\frac{6}{4} \text{ և } \frac{21}{8}$

• $\frac{3}{8} \text{ և } \frac{6}{18}$

• $\frac{26}{4} \text{ և } \frac{4}{26}$

• $\frac{16}{4} \text{ և } \frac{51}{6}$

Կոտորակները դասավորեք աճման կարգով(փոքրից մեծ հերթականությամբ)

$$\frac{6}{4}, \frac{21}{4}, \frac{1}{4}, \frac{101}{4}, \frac{3}{4}, 1$$

Կոտորակները դասավորեք նվազման կարգով(մեծից փոքր հերթականությամբ)

$$\frac{8}{5}, \frac{8}{51}, \frac{8}{3}, \frac{8}{6}, \frac{1}{8}, 1$$

